ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի ապրիլի 9-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Քարաբերդ բնակավայրի վարչական շենքում տեղի ունեցավ «Գրեյ Բազալտ» ՍՊ ընկերության ՀՀ Շիրակի մարզի Մարալիկի պերոքսենային անդեզիտի հանքավայրի բացահանքի տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման վերաբերյալ հանրային 1-ին քննարկումն է:

Լսումների ընթացքում, որը տեսաձայանագրվել է, համանքի ներկայացուցիչ Վահագն Սարոյանի մուտքի խոսքից հետո խոսքով հանդես եկավ «Գրեյ Բազալտ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Գուրգեն Հակոբյանը, որի կողմից ներկայացվել է հանքավայրի շահագործման արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցության մասին տեղեկատվությունը, նախատեսվող բնապահպանական միջոցառումները, նոր աշխատատեղերի ստեղծման, ընկերության կողմից համայնքին սոցիալական և այլ օժանդակության հարցեր:

Որից հետո ընկերության ներկայացուցիրչը պատասխանեց Քարաբերդ բնակավայրի ազդակիր բնակիչների մի շարք հարցերի: Հարցերի զգալի մասը վերաբերվում էր սոցիալական ծրագրերին, ճանապարհների վերանորոգմանը, ներդումներին և ընկերության կողմից սոցիալական ոլորտում ստանձնած պարտավորություններին՝ շեշտելով որ նշված հարցի հետ կապված արդեն իսկ եղել է չորս հանրային քննարկում:

Ընկերության ներկայացուցիչ Գուրգեն Հակոբյանը լսումների ընթացում հանգամանալից պատասխանեց բարձրացված բոլոր հարցերին, շեշտվեց, որ հանքավայրը նոր փոփոխությամբ հեռու է բնակելի հատվածից, օրենսդրությամբ սահմանված սանիտարական գոտու հեռավորության պահպանման նպատակով հայցվող տեղամասի մակերեսը կրճատվել է::

Ավարտին՝ «Գրեյ Բազալտ» ՍՊԸ-ի տնօրեն Ռուբեն Երվանդյանը հաստատեց, որ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի առկայության դեպքում քննարկումներին նշված բոլոր ստանձնած պարտավորությունները կիրականացվեն:

Հանրային քննարկումների արդյունքում ՀՀ Շիրակի մարզի Անի համայքի ներկայացուցիչ Վահագն Սարոյանը հայտնեց համայնքի նախնական դրական դիրքորոշումը՝ որը կքննարկվի ավագանուն նիստի ժամանակ:

Ազդակիր բնակավայրի լսումների ընթացքում հնչեցրած կարծիքը կքննարկվի և նախնական համաձայնության դեպքում՝ «Գրեյ Բազալտ» ՍՊ ընկերության ՀՀ Շիրակի մարզի Մարալիկի պերոքսենային անդեզիտի հանքավայրի բացահանքի

տեղամասի օգտակար հանածոների արդյունահանման վերաբերյալ ավագանու որոշման արդյունքում կտրվի նախնական համաձայնություն՝:

Անի համայքի ներկայացուցիչ՝ Վ. Սարոյան

Անի համայքի ներկայացուցիչ՝ Ա. Ուռումյան

«Գրեյ Բազալտ» ՍՊԸ-ի

Տնօրեն՝ Ռ. Երվանդյան

«ԳՐԵՅ ԲԱԶԱԼՏ»
"ГРЕЙ БАЗАЛТ"
"GREY BAZALT"
05559934